



Միսաք Մեծադեմ

Մեռելոց

Ձըմեռ օր մը, ձիւնին մէջէն, մի՛ս-մինակ,
ձիւնին մէջէն, տարի դամբանն իմ հոգւոյս,
Ժըպիտով մը ծընած նախկին սէր մը կոյս.
ըսպիտա՛կ վարդ՝ որ սառեցաւ ձիւնին տակ:

Գարուն մըն էր, եւ համբոյրով մը բացուած
դամասկեա՛ն վարդ, գինով արփին գաղջ գոլէն,
նրադեցաւ ուրիշ սէր մը. սէ՛րն, Ա՛ստուած՝
գոր թաղեցի՛ յուսատ՛ կեանքին կանչելէն:

Ամրան վերջն էր, նայուածքով մը բողբոջած
դեղին վա՛րդս ալ ինկաւ աշնան շունչին տակ.
գայն վերցուցի՛ արդէ՛ն եղած յիշատակ՝
ու նետեցի փոսին մէջ, ցա՛ծ, ա՛հ, շա՛տ ցած:

Հիմակ ամէն մեռելոցի ես կ'երթամ
անոնց մարմար դամբանին վրայ ցրտաշունչ,
աղօթքով մը, կորած մէգին մէջ տարտամ
անոնց յուշքին, մըտաթափառ, լուռ ու մունջ:

Ու մըտածումս ալ, հէ՛ք նժդեհ քահանայ,
խաչ հանելով կ'ըսէ բառեր լուսեղէն.
ու նայուածքս կը բաժնրի երբ հողէն,

հոգիս զանոնք անգա՛մ մըն ալ կը մոռնայ...: